աւանդութիւններ, թէ նրանք առաջ էին եկել իր անձը աստծուն նոիրած մարդու ստեպ ծնրադրութիւնից: Այնտեղ ճրագ չկար, բայց մի անկիւնում վառւում էին մի քանի կտոր փայտեր, ոչ թէ տաքացնելու համար, այլ լոյսի համար:

Մի կողմում խորին քնի մէջ պառկած էր պառաւ կախարդը: «ճգնաւորն» արթուն էր. նա իր փառահեղ մօրուքով նստած, մտածում էր: Նրա ծնկների վրայ գլուխը դրած, ննջել էր փոքրիկ Հիւբբին: — Հրաշալի՜ մի տեսարան էր այդ:

Երբ մենք ներս մտանք, «ճգնաւորը» խիստ զգուշութեամբ փոքրիկ վհուկի գլուխը դրեց իր վերարկոի վրայ, որ նրա անուշ քունը չխանգարէ, եւ վեր կացաւ: Նա գրկեց առաջ ինձ եւ համբուրեց, յետոյ գրկեց եւ Մարօին: Մարօն չընդդիմացաւ նրան, որովհետեւ եւ մի աղջիկ չէր կարող մերժել այն անմեղ շրթունքը, որ այնպէս եղբայրաբար մերձեցան սիրելի օրիորդի շրթունքին:

Այնուհետեւ «ճգնաւորը» ոտքից մինչեւ գլուխ զննելով ծպտեալ եւ զինոորոած Մարօին, ասաց.

— Ահա այդպէս լաւ է. այդ սիրում եմ ես:

Մենք նստեցինք:

— Այժմ ես կը խլեմ իմ դիմակը, — ասաց նա, — բարեկամներիս մօտ պէտք չէ ինձ թաքնոած մնալ:

Նա առեց իր կեղծամը, մօրուքը եւ մեր առջեւ ներկայացաւ Ասլանը իր բնական կերպարանքով:

Ես մի քանի խօսքերով յայտնեցի մեր գալու նպատակը. այնուհետեւ պատմեցի այն բոլորը, ինչ որ լսել էի Սօնայից «Կաթնաղբիւր» ձորում, այլեւ հաղորդեցի նրան՝ ինչ որ ասել էին ինձ քեռի Պետրոսը եւ տէրտէրն իրանց վրանում: Այնուհետեւ աւելացրի, թէ որպիսի դաւադրութիւն է պատրաստւում ծերունի որսորդի եւ նրա բարեկամների դէմ: Իսկ Մարօն իր կողմից յայտնեց իր արած կարգադրութիւնները, թէ Մըհէի ձեռքով նա արդէն բոլորը իմացում տոած է իր հօրը:

— Շնորհակալ եմ ձեր հոգածութեան մասին, — ասաց նա տխուր կերպով: — Բայց այդ բոլորը ես արդէն գիտէի: Իմ աբեղայական կերպարանքը առիթ տոեց ինձ մտնել դաւադիրների ժողովների մէջ որպէս խորհրդակից: Բայց նրանց ճիգը անզօր է...

Որպէս երեւում էր, Ասլանը շատ տխուր էր, եւ մեր այցելութիւնն այնքան հաճելի չէր նրան: Գուցէ նա չէր ցանկանում, որ իր կերպարանափոխու-